ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԲԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
հեռախոս-093670701

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

թիվ 035/38
18.12.2015թ.

Հարգելի պարոն Նալբանդյան
Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքի ավագանու թիվ 23,24,25,26 և 27 որոշումները:
Առդիր՝ 11 թերթ

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-093670701

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» դեկտեմբերի 2015 թվականի N 26

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Ծաղկաբեր համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 28-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման , զինծառայությունից ազատվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Ս.Սարգսյան		0	0
Հ.Հովհաննիսյան		0	0
Վ.Սվարյան		0	0
Ա.Իսրաելյան		0	0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ա.Սանթրոսյան

Հավելված
Ծաղկաբեր գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 26 որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Գևորգյան Արայիկ	եռեսուն հազար դրամ
Գևորգյան Անդրանիկ	եռեսուն հազար դրամ
Խալաթյան Տիգրան	եռեսուն հազար դրամ
Սահրադյան Սամվել	եռեսուն հազար դրամ
Մովսիսյան Շողիկ	եռեսուն հազար դրամ
Պետրոսյան Թելման	եռեսուն հազար դրամ
Հարությունյան Լուսյա	եռեսուն հազար դրամ
Մուշեղյան Շուշանիկ	եռեսուն հազար դրամ
Ոսկանյան Զարուհի	եռեսուն հազար դրամ
Թմոյան Ասյա	եռեսուն հազար դրամ
Գյուլազյան Էվելինա	եռեսուն հազար դրամ
Սահակյան Նատո	եռեսուն հազար դրամ
Թումասյան Գոհար	եռեսուն հազար դրամ
Ոսկանյան Չինար	եռեսուն հազար դրամ
Բորջյան Սամվել	եռեսուն հազար դրամ
Սահակյան Հովսեփ	եռեսուն հազար դրամ
Օհանջանյան Հովիկ	եռեսուն հազար դրամ
Թեմուրյան Դեսպիկ	եռեսուն հազար դրամ
Ալոյան Դավիթ	եռեսուն հազար դրամ
Սարգսյան Մարինե	եռեսուն հազար դրամ
Հունանյան Սիլվարդ	եռեսուն հազար դրամ
Օհանջանյան Ռուբիկ	եռեսուն հազար դրամ
Իսրայելյան Հովհաննես	եռեսուն հազար դրամ

Ընդամենը՝ յոթ հարյուր հազար դրամ

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-093670701

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» դեկտեմբերի 2015 թվականի N 27-Ն

Ծաղկաբեր համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «Ղեկավարվելով բյուջետային համակարգի մասին օրենքով՝

համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Ծաղկաբեր համայնքի 2016 թվականի բյուջեն

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Ս.Սարգսյան		0	0
Հ.Հովհաննիսյան		0	0
Վ.Սվարյան		0	0
Ա.Իսրաելյան		0	0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Սանթրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-093670701

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» դեկտեմբերի 2015 թվականի N 24

Ծաղկաբեր համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հատիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով.«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով.

համայնքի վագանին որոշում է.

1. Հաստատել Ծաղկաբեր գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:
2. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաբեր գյուղական համայնքի 30.06.2015 թ. թիվ 11 որոշումը :
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Ս.Սարգսյան		0	0
Հ.Հովհաննիսյան		0	0
Վ.Սվարյան		0	0
Ա.Իսրաելյան		0	0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ա.Սանթրոսյան

Հավելված
Ծաղկաբեր գյուղական համայնքի ավագանու
2015թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 24 որոշման

Ծաղկաբեր համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հատիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնական դրույքաչափը /ՀՀ դրամ/
Համայնքի ղեկավար	1	220000
Համայնքի ղեկավարի օգնական	1	80000
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	140000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար	1	140000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ	1	130000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	2	115000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ	1	75000
Տեխսպասարկման անձնակազմ		
Տեխնիկական աշխատող՝	1	73000
Հավաքարար	1	73000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Սանթրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-093670701

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» դեկտեմբերի 2015 թվականի N 25

Ծաղկաբեր համայնքի «Ծիածան» ՀՈԱԿ նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հատիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով.«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով.

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ծաղկաբեր համայնքի «Ծիածան» ՀՈԱԿ նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:
2. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաբեր գյուղական համայնքի 30.06.2015 թ. թիվ 12 որոշումը :
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Ս.Սարգսյան		0	0
Հ.Հովհաննիսյան		0	0
Վ.Սվարյան		0	0
Ա.Իսրաելյան		0	0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Սանթրոսյան

Հավելված
Ծաղկաբեր գյուղական համայնքի ավագանու
2015թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 25 որոշման

Ծաղկաբեր համայնքի «Ծիածան» նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը 6
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորների թիվը	Պաշտոնական դրույքաչափը (հազար դրամ)
	ՀՈԱԿ-ի տնօրեն	1	80000
	Դաստիարակ	1	78000
	Դաստիարակի օգնական	0,5	78000
	Դաստիարակի օգնական	0,5	78000
	Հաշվապահ	0,5	78000
	Խոհարար	1	78000

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-093670701

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» դեկտեմբերի 2015 թվականի N 23-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով.«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ծաղկաբեր գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաղկաբեր գյուղական համայնքում 2016 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Ս.Սարգսյան		0	0
Հ.Հովհաննիսյան		0	0
Վ.Սվարյան		0	0
Ա.Իսրաելյան		0	0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Սանթրոսյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Ծաղկաբեր գյուղական համայնքի ավագանու

2015 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 23-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ տաս հազար դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ եռեսուն հազար դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ վաթսուն հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեք հազար դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երկու հազար դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված

նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հինգ հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հազար հինգ հարյուր դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հազար հինգ հարյուր դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հարյուր հիսուն հազար դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երեսուն հազար դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ երեք հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ հազար դրամ.

դ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է _____ դրամ.

ե) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է _____ դրամ:

5[1]. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժ» ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար _____ դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ հիսուն հազար դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հազար դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ հարյուր հազար դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.

դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ հազար դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հազար հինգ հարյուր դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հազար դրամ:

9.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ:

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ չորս հազար դրամ:

11. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ երկու հազար դրամ:

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճար սահմանել՝ երկու հազար դրամ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Սանթրոսյան

14 դեկտեմբերի 2015թ.